

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐԿԻԱՅԻ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
1920 Ք. ԴԵԿՏԵՄԲԵՐ—1921 Ք. ՓԵՏՐՎԱՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ

4. ԱՐԴԱՐՑԱՆ

Կործանման եզրին հասած հայ ժողովուրդը մեծ խանդավառությամբ դիմավորեց Հայաստանում սովետական կարգերի հաստատումը: 1920 թ. դեկտեմբերի 2-ին Վ. Ի. Լենինը Հայ-հեղեղմի նախագահ Ս. Կասյանին հեռագրում է. «Հանձին Ձեզ ողջունում եմ իմ պերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական Սովետական Հայաստանին: Ձեզ կասկա՛ում, որ Դուք կործանողիք բոլոր ջանքերը Հայաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի աշխատավորների միջև եղբայրական համերաշխություն հաստատելու համար»<sup>1</sup>:

Գրոշետարիատի առաջնորդի ցուցումները դարձան գործողության ուղեցույց ՀԿԿ Կենտկոմի և Հայհեղեղմի համար: ՀԿԿ Կենտկոմի օրգան «Կոմունիստ» թերթի՝ առաջին համարի խմբագրական հոդվածն է լուր ամենքի հավաստում է, որ «Խորհրդային Հայաստանը եղբայրական ձեռք է մեկնում Անգորայի ժողովրդական կառավարությանը, համոզված լինելով, որ համաշխարհային իմպերիալիզմի դեմ ծառայած հայ և տաճիկ մասսաների սերտ զինակցությունը հավասարապես բխում է երկու երկրների կենսական շահերից: Խորհրդային Հայաստանը ոչ միայն կպահովի Տաճկաստանի ռազմական թիկունքը բոլոր իմպերիալիստական դավադրությունների դեմ, այլև իր գործոն աշակցությունը ցույց կտա նրա հեղափոխական պայքարին դրանց դեմ: Մյուս կողմից, Խորհրդային Հայաստանը չի կարող չընդ հավատ լուսնենալ, որ Անգորայի ժողովրդական կառավարությունը իր կողմից աջակից կլինի Հայաստանի ապստամբած ժողովրդին և կթիթևացնի նրա գործը նոր հանրակարգի ամրացման մեջ»<sup>2</sup>:

Այսպիսի լավատեսությունը մասամբ պայմանավորված էր քեմալականների այն հայտարարություններով, որ իրենց հարձակումը Հայաստանի վրա ուղղված է եղել միջազգային իմպերիալիզմի դաշնակից դաշնակցության դեմ: Թիֆլիսում քեմալականների ներկայացուցիչ Փյադիմ բեյը մամուլի ասուլիսում հայտարարել է. «Հայաստանում խորհրդային իշխանություն սահմանելը մենք համարում ենք շատ նպաստավոր: Մինչև օրս միակ բանը, որ բաժանում էր Թուրքիան Հայաստանից, դա դաշնակների իշխանությունն էր: Սակայն այժմ, երբ Հայաստանում սահմանվում է խորհրդային իշխանություն, մենք խորթ չենք լինի նրան»<sup>3</sup>:

Բայց շուտով պարզվում է, որ քեմալականները բարի-դրացիական հասկացողությունը յուրովի են ընկալում:

Քեմալական Թուրքիան, օգտվելով Սովետական Ռուսաստանի համար միջազգային հարաբերություններում ստեղծված դժվարին կացությունից, մինչև սովետա-թուրքական պայմանագրի (1921 թ. մարտ) ստորագրումը, բացահայտ ձգտում էր Սովետական Հայաստանին պարտադրել դաշնակցության հետ կնքած Ալեքսանդրապոլի պայմանագիրը:

Սովետական Հայաստանի կառավարությունը քեմալականների հետ միջպետական նորմալ հարաբերություններ հաստատելու համար անկյունաքար էր տեսնում Ալեքսանդրապոլի պայմանագրի չեղյալ հայտարարելը և նոր կոնֆերանսի հրավիրումը: Այս ոգով էլ 1920 թ. դեկտեմբերի 10-ին քեմալական կառավարությունը նոտա է հղում Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ա. Բեկզադյանը<sup>4</sup>: 1920 թ. դեկտեմբերի 19-ին պատասխան նոտայով Թուրքիայի արտաքին գործերի կոմիսար Ահմեդ Մուհթարը հիմնավորապես հերքում և անհասկանալի է համարում Ա. Բեկզադյանի փաստարկները. «Ինչ վերաբերում է հաշտության դաշնագրի փոփոխությանը, չենք հասկանում, թե ի՞նչն է պարտադրում այդ բանին: Ազգերի ինքնորոշման վրա հիմնվելով՝ այդ վայրերում Հայաստանը ոչ մի իրավունք չի կարող ունենալ,

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 42, էջ 65:

<sup>2</sup> «Կոմունիստ», Երևան, 1920, № 1:

<sup>3</sup> Նույն տեղում, 15 դեկտեմբերի:

<sup>4</sup> Հեղեղմի արտաքին գործերի կոմիսար Ահմեդ Մուհթարը հիմնավորապես հերքում և անհասկանալի է համարում Ա. Բեկզադյանի փաստարկները. «Ինչ վերաբերում է հաշտության դաշնագրի փոփոխությանը, չենք հասկանում, թե ի՞նչն է պարտադրում այդ բանին: Ազգերի ինքնորոշման վրա հիմնվելով՝ այդ վայրերում Հայաստանը ոչ մի իրավունք չի կարող ունենալ,

մանավանդ որ այդ տերիտորիաները անգլիացիներն էին սովել դաշնակներին ի դեմս նրանց ծառայության, ոտնահարելով մարդկային ամեն տեսակ իրավունքները: Այս հարցում Հայաստանի կոմունիստական կառավարությունը ավելորդ տեղը պնդելով ուրիշ բան արած չի լինի, հիմն ոչ այն կարծիքը ներշնչելու, որ նույն իմպերիալիստական և աշխարհակալ ուղղության հետևանքով նպատակ ունեցող անունը փոխած մի դաշնակ կառավարություն է: Դաշնագրի հողվածները մեջ ևս առարկություն արժանի և հաղթողի կողմից հաղթվողին ընդունել տալու կարծիք առաջացնող որևէ կետ չենք տեսնում<sup>5</sup>:

Զեմալականները լսել անգամ չէին ցանկանում Սովետական Հայաստանի հետ բանակցություններ սկսելու և նոր պայմանագիր կնքելու մասին, պատճառաբանելով, որ այդ հարցերը կլուծվեն Մոսկվայում գումարվելիք ռուս-թուրքական կոնֆերանսում<sup>6</sup>: Միևնույն ժամանակ նրանք չէին թաքցնում, որ Մոսկվայի կոնֆերանսում հայ-թուրքական տարածքային հարցը պետք է լուծվի Ալեքսանդրապոլի պայմանագրի համապատասխան: Հիշատակված նոտայում ԱՏՄԿ Մոսկվայում Սովետական Հայաստանի կառավարությանը դաշնակցական դիտավորությունների մեջ մեղադրելուց հետո հոխորտում էր. «Ռուսների հետ գումարվելիք կոնֆերանսում պատրաստ ենք մեր տրված բացատրությունները կրկնելու և մեր անժխտելի իրավունքները հաստատելու»:

Թուրքիայի նկատմամբ եղած անկեկախիբները անիրական հաշիվներ դուրս եկան, հանգամանք, որը ՀԿԿ Կենտկոմի և Հայհեղկոմի համար ստեղծեց ծարահեղ դժվարին կացություն: Սովետական Հայաստանի քաղաքական և տնտեսական ծանր վիճակի մասին 1920 թ. դեկտեմբերի 13-ին Վ. Ի. Լենինին գեկուցում են Հայհեղկոմի անդամներ Ս. Տեր-Գաբրիելյանը և Ա. Մոսկվայի: Վ. Ի. Լենինը առաջնորդին հատուկ շիտակովյամբ նրանց պատասխանում է. «... Թուրքերի հետ բանակցություններ կսկսենք և երկաթուղին կազատենք: Մենք ինչնեքս դժվարին կացության մեջ ենք, բայց խորհրդային Հայաստանին կօգնենք ամեն կերպ»:

Տեսնելով, որ զեմալականները կտրականապես հրաժարվում են հայ-թուրքական նոր կոնֆերանս հրավիրելու պահանջից և պնդում են Ալեքսանդրապոլի պայմանագրի օրինականության վրա, Հայհեղկոմը սահմանափակվեց Ալեքսանդրապոլի գավառը թուրքերից ազատելու պահանջով, որը համանուն պայմանագրով մնում էր Հայաստանին: Ալեքսանդրապոլի գավառը թուրքական օկուպացիայից ազատելը Սովետական Հայաստանի համար ուներ նաև բարոյա-հոգեբանական կարևոր նշանակություն: Դժվարությունը նրանում էր, որ զեմալականները Ալեքսանդրապոլի գավառը գրավելուց հետո այնտեղ ստեղծել էին «Հեղկոմ»: Այս ակտով նրանք մի կողմից սովետական կողմին հասկացնում էին, որ վերադարձան է ենթակա միայն Ալեքսանդրապոլը, իսկ մյուս կողմից էլ իրենց քաղաքությունները կատարում էին «սովետական իշխանության անունով»: Այս երևույթը թերահավատ մտայնություն էր առաջացնում ժողովրդի մեջ, որը համոզված էր, որ Հայաստանում սովետական իշխանության հաստատվելուց հետո դրուժյունը արժատապես կփոխվի: Այս հավատով էր կործանման եզրին հասած հայ ժողովուրդը փարվել սովետական իշխանությանը, նրանից ակնկալելով այն հարցերի լուծումը, որոնք չէր կարողացել լուծել նախկին կառավարությունը:

Ժողովրդի մեջ առաջացող կասկածները փարատելու համար 1920 թ. դեկտեմբերի 26-ին «Կոմունիստ» թերթում տպագրվում է «Խորհրդային իշխանությունը և տաճկահայ աշխատավորությունը» հոդվածը: «Խորհրդային Հայաստանին և նրա հետ միասին տաճկահայ աշխատավորությանը հարկավոր է նախ և առաջ խաղաղություն Տաճկաստանի հետ՝ իր վերքերը բուժելու համար: Իսկ ինչ վերաբերում է Տաճկաստանից ստանալիք Հայաստանի աշխատավորությանը անհրաժեշտ հողամասերին՝ Խորհրդային Հայաստանը այն կստանա ոչ թե կտրով, այլ լուրջ ու ճանապարհով, իր դաշնակից ունենալով տաճիկ կոմունիստներին»:

Թուրքիայում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Մգիլյանին 1920 թ. նոյեմբերի 19-ին վարչապետ Հ. Օհանյանյանին մեղադրում էր անըրչահայացության համար և հավաստում էր, որ «Հայաստանի խորհրդայնացման պարագայում իր առաքելության նպատակն է լինելու պնդել, որ թուրքերը ետ քաշվեն 1914 թ. սահմանից այն կողմ»<sup>7</sup>: Բայց այս ամենը ետևում էր մնացել, և նա 1920 թ. դեկտեմբերի 15-ին Ի. Ստալինին և Գ. Օրջոնիկիձեին հեռագրում էր, որ առանց ավելորդ կասկածների թուրքերը հավատացած են, որ սովետական իշխանության հաստատումով Հայաստանում ոչ մի փոփոխություն չի կատարվել և դաշնակները կվարեն նախկին քաղաքականությունը սովետական դիմակով<sup>8</sup>: Դաշնակցությունը թուրք ազգայնականների համար

<sup>5</sup> ՉՍՄՀ ՀՄՍՇ ՊԿԱ, ֆ. 114, ց. 1, գ. 6, թ. 18—19:

<sup>6</sup> Այս մասին մանրամասն տե՛ս է. Զոհրաբյան, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920—1922 թ.թ., Եր., 1979 թ.:

<sup>7</sup> ՀՄՍՇ ՊԿԱ, ֆ. 114, ց. 1, գ. 6, թ. 19:

<sup>8</sup> Ա. Մոսկվայն, Հողվածներ և ճառեր, Եր., 1961, էջ 222:

<sup>9</sup> «Բանբեր Հայաստանի արխիվներին», 1967, № 3, էջ 91:

<sup>10</sup> ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 85, ց. 1, գ. 50, թ. 20:

Քրրախ էր Սովետական Հայաստանի նկատմամբ վարվող թշնամական քաղաքականությանը դասակարգային հնչեղություն տալու համար: Նրանք ինչքան որ մտացածին բաներ էին տարածում Հայաստանում կառավարության ձևական փոփոխության մասին, այնքան էլ եռանդուն կառչել էին նախկին կառավարության հետ կնքած Ալեքսանդրապոլի պայմանագրին: Այդ ոգով էլ քե-  
հայականները շարունակեցին իրենց «փոխհարաբերությունները» Սովետական Հայաստանի հետ, մինչև ուս-թուրքական պայմանագրի ստորագրումը: Դրա առաջին վկայությունն այն էր, որ Սովետական Հայաստանում Թուրքիայի «լիազոր ներկայացուցիչ» մնաց կապիտան Բեհանէդդինը, որի մանդատի վրա գրված էր՝ «Թուրքիայի և Հայաստանի դաշնագրի (Ալեքսանդրապոլի — 4. Ս.) մի քանի կետերի հետապնդման համար Երևանում, որպես Արևելյան բանակի կապի սպա, նշանակել կապիտան Բեհանէդդինին»<sup>11</sup>:

Քեմալականները ցանկանում էին, որ Սովետական Հայաստանի կառավարությունը լուծվայն կատարի իր բոլոր պահանջները:

1920 թ. դեկտեմբերի 13-ին Թուրքիայի արևելյան բանակի հրամանատար Քյսզմ Կարաբեքիրը, ի կատարումն դաշնակցության հետ կնքած զինադադարի պայմանների, Հայհեղվոմից պահանջում է 85 ձի և ամբողջ ռազմամթերքի տեղափոխումը Իզդիր, իսկ թուրքական բանակի համար Երևանում մթերքներ գնելու թույլտվություն<sup>12</sup>: Այսպիսի պահանջը բնականորեն չէր կարող ընդունվել Հայհեղվոմի կողմից, որը Ա. Բեկզադյանի ստորագրությամբ Ուկ(բ)ԿԿԿ կողմ կայան ատաշինը, քանի որ մեզ պարտավորված չենք համարում կատարելու թուրքական հրամանատարության հետ դաշնակցական կառավարության կնքած զինադադարը կամ պայմանագիրը... Այսօր ինձ մոտ էր Բեհանէդդինը, բայց մենք դեռ պաշտոնական պատասխան չենք տվել: Հեղվոմի վերաբերմունքը այդպիսի պահանջների հանդեպ անպայմանորեն բացասական էր<sup>13</sup>, Քանի որ հարցը սկզբունքային նշանակություն ուներ Հայհեղվոմի համար, որովհետև խոսքը վերաբերում էր ոչ թե միջադեպին, այլ Հայաստանի նկատմամբ Թուրքիայի անփոփոխ քաղաքական կուրսին, ուստի և գնալով փոխհարաբերություններն աճելի են սրվում:

1921 թ. հունվարի 1-ին Բահանէդդինը Ա. Բեկզադյանին բողոքում է, որ «փոստը չի ընդունել իր ծածկագիրը՝ ուղղված Կարաբեքիրին, պատճառաբանելով, որ չկա Ձեր ցուցումը»: Հայտնում է նաև, որ իր մի քանի դիմումներ՝ հասցեահարված Բեկզադյանին, մնացել են անպատասխան: Վերջում հիշեցնում է նաև իր ֆունկցիաների և լիազորությունների մասին<sup>14</sup>: 1921 թ. հունվարի 3-ին Ա. Բեկզադյանը Բահանէդդինի հարցադրմաներին պատասխանում է որ... փոստը բնականորեն ոչ մի ծածկագիր չի ընդունում առանց արտաքին գործերի կոմիտեի կարգադրության: Ինչ վերաբերում է Ձեր ֆունկցիաներին և լիազորությանը, ապա դուք ուղարկվել եք Երևան ինչպես կապի սպա «պայմանագրի մի քանի կետերի կատարման համար», իսկ պայմանագիրը կնքվել է նախկին դաշնակցական կառավարության հետ: Ուրիշ լիազորությունների մասին սովետական իշխանության օրով մենք ցուցում չենք ստացել: ոչ Ձեր, ոչ էլ Ձեր հրամանատարության կողմից: Ձեր մանդատի վրա գրված է 2—12/1920 թ. այսինքն՝ երբ ինձ ներկայացնող կոմիտարիատը դեռ չէր կազմավորվել: Բացի այդ մանդատը տրված է Արևելյան ռազմաճակատի հրամանատարի, այլ ոչ թե Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովի կառավարության արտաքին գործերի կոմիտարիատի կողմից, որը ցավոք սրտի մեզ համար չի կարող ունենալ: դիվանագիտական փաստաթղթի նշանակություն: Փաստորեն Ձեր միջոցով մենք չենք կարող լուծել այն բազմաթիվ քաղաքական հարցերը, որոնք գոյություն ունեն մեր պետությունների միջև»<sup>15</sup>: Բեկզադյանի պատասխանում բերված փաստարկները պարզորոշ հասկացնում էին, որ քեմալական կառավարությունը, Հայաստանում լիազոր թողնելով Արևելյան ռազմաճակատի ներկայացուցչին, չի ցանկանում ճանաչել Սովետական Հայաստանի անկախ գոյության փաստը: Բայց քանի որ քեմալականների համար Հայաստանի և Թուրքիայի միջև չլուծված «քաղաքական հարցեր» չկային, ուստի և նրանք շարունակում են «ռազմական չեզոք» խոսել: Չնայած Բեկզադյանի իրապաշտ փաստարկներին, Թուրքիայի արտաքին գործերի կոմիտարի փոխարեն կրկին հարցը լուծում է՝ Կարաբեքիրը: Նա հունվարի 3-ին հեռագրում է Բահանէդդինին. «Մինչև Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովի կառավարության ներկայացուցչի Երևան ժամանելը պարտականությունները դրվում են Ձեզ վրա»<sup>16</sup>: Հունվարի 4-ին Բահանէդդինը Կարաբեքիրի հեռագիրը հանձնում է Ա. Բեկզադյանին<sup>17</sup>:

Ա. Բեկզադյանի կողմից Բեհանէդդինին դիվանագիտական ներկայացուցչով փոխարինելու

11 ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 114, ց. 1, գ. 6, թ. 87:

12 Նույն տեղում, թ. 20:

13 Նույն տեղում, թ. 82—84:

14 Նույն տեղում, գ. 15, թ. 29:

15 Նույն տեղում, գ. 6, թ. 40:

16 Նույն տեղում, թ. 42:

17 Նույն տեղում, գ. 15, թ. 32:

պահանջը բարձրացվել է նաև դեկտեմբերի վերջին, բայց կրկին «լուծվել է» զինվորական իշխանությունների կողմից, 1920 թ. դեկտեմբերի 30-ին Բահանդդինը Բեկզադյանին հայտնում է. «Եմ երեկվա հարցմանը ի պատասխան ես գլխավոր շտաբից ցուցում ստացա շարունակելու հնձ վրա դրված ֆուկեցիաները»<sup>18</sup>: Քեմալական Թուրքիայի հետ միջպետական նորմալ դիվանագիտական փոխհարաբերություններ հաստատելու ուղղությամբ Հայհեղձովի ջանքերն անցան ապարդյուն: Բերենք մի քանի փաստեր: 1921 թ. հունվարի 6-ին Բեկզադյանի հրամանով ավելացվում է Թուրքական ներկայացուցչության շենքային տարածքը: Բահանդդինի պահանջով նրանց է տրվում Այա խանի բնակարանը<sup>19</sup>: Հեռագրատանը կարգադրվում է Բահանդդինի բուր հեռագրերը ընդունել առանց արտաքին գործերի ժողովրդական կոմիտեի ստորագրության<sup>20</sup>:

Կարաբեքի փաշան, որը թալանել է բացահայտ սովի էր մատնել օկուպացված տարածքները, 1920 թ. դեկտեմբերի 31-ին հեռագրում է Բեկզադյանին՝ «անհանգստություն» հայտնելով Արարատ կայարանում գտնվող քառասուն իզդիրցի մուսուլման գաղթականների վիճակի համար<sup>21</sup>, 1921 թ. հունվարի 3-ին Բեկզադյանը նրան հայտնում է, որ զինվորական իշխանություններին հրահանգ է տրված նրանց Արարատից Արալիխ կայարան փոխադրելու և հացով հատուկ գնացք է ուղարկել նրանց համար<sup>22</sup>:

Քյազիմ Կարաբեքիը ամենից լավ գիտեր, որ շրջափակված Հայաստանը գտնվում է տրեսեսական ողբերգական վիճակում և գաղթականներով ու որբերով լցված երկրի կառավարությունը, չնայած իր անելանելի վիճակին, այդ ամիսներին ընդունում և տեղափոխում էր հազարավոր մուսուլման գաղթականների: Արդեն 1921 թ. մարտին՝ ՌԿ(Բ) 10-րդ համագումարին Ա. Բեկզադյանը զեկուցեց, որ Հայաստանը ընդունել է 50 հազար մուսուլման գաղթականներ և որ նրանց տեղավորման ժամանակ ոչ մի միջադեպ չի եղել<sup>23</sup>, Գեկտեմբեր—հունվար ամիսներին Երևանից հացով և պարենամթերքներով բեռնված գնացքներն էին գնում Նախիջևանի, հայ-թուրքական պատերազմի ժամանակ Հայաստանից Նախիջևան անցած մուսուլման գաղթականներին օգնելու համար: «Նախիջևանի շրջանի գաղթականներին Խորհրդային Հայաստանը ցույց է տալիս պարենային օգնություն և լիակատար աջակցություն... Գաղթականների համար հիմնված են սննդատու կայաններ, ուր տրվում է հաց, կակաո, կոֆե և կաշա: Երեք հազար հոգի օրապահակ են ստանում»<sup>24</sup>:

Երբ Հայհեղձովը Կարաբեքիի պահանջով 40 մուսուլման գաղթականներին համար հացով բեռնված հատուկ գնացք էր ուղարկում, այդ նույն ժամանակաշրջանում Կարաբեքիի «օրհնության» բացահայտ սովի էին մատնված հազարավոր հայ որբեր և անօթևան արևմտահայ գաղթականներ:

1921 թ. դեկտեմբերի 21-ին Թուրքիայի կոմունիստական կուսակցության հանձնաժողովի նախագահ Իսմայիլ Հակիկին հեռագրով Կարաբեքիից խնդրում է. «Սովյալ Հայաստանի պարենային դրուժյունից ինչևիդև և դժբախտ հայ ժողովրդին սովից փրկելու համար Բաքվից եկած 35 վագոն հացահատիկը բաց թողնել Ալեքսանդրապոլից»<sup>25</sup>:

Հիմնավորապես թալանվել էին նաև Ալեքսանդրապոլի որբանոցների պահեստները: 1920 թ. դեկտեմբերի 25-ին Հայհեղձովին հղած Ալեքսանդրապոլի հեղձովի զեկուցագրում նշված է. «Խնդրում ենք որբ երեխաներին այստեղից փոխադրել Երևան, որովհետև սննդի և վառելիքի լիակատար բացակայության պայմաններում նրանք այստեղ դատապարտվում են անխուսափելի մահվան, բացի 1000 որբերից, որոնք գտնվում են ամերիկյան որբանոցներում, մեզ յոտ սովի են մատնված 4000 որբ երեխաներ»<sup>26</sup>:

Քեմալականները Սովետական Հայաստանի նկատմամբ օկուպանտի դիրքերից իրենց ջազաբականությունը շարունակեցին մինչև փետրվարյան խռովությունը: Հատկապես դրուժյունը ծանր էր Հայաստանի այն շրջանների համար, որոնք գտնվում էին զինադադարի գծի տարածքում: Համաձայն 1920 թ. նոյեմբերի 18-ի զինադադարի՝ Նայրանդ կայարանից մինչև Ղարափիլիս հայտարարվել էր հայ-թուրքական շեղք գոտի: Հայաստանում սովետական կարգի հաստատվելուց հետո անփոփոխ է մնում նաև այս շեղքը գոտու ստատուսը, միայն մի տարբերությունով, որ թաշնակցական կառավարության՝ Սուրեն Մելիքյանի գլխավորած միախալին, որպես շեղք գոտու վրա հսկողություն սահմանող իրավական կողմ փոխարինում է կարա-

<sup>18</sup> Նույն տեղում, գ. 6, թ. 31:

<sup>19</sup> Այս բնակարանը գտնվել է ներկայիս Ազիզբեկովի հրապարակի տարածքում:

<sup>20</sup> ՀՀՍՀ ՊԿԱ, ֆ. 114, ց. 1, գ. 6, թ. 46—47:

<sup>21</sup> Նույն տեղում, թ. 55:

<sup>22</sup> Նույն տեղում, թ. 59:

<sup>23</sup> Стенографический отчет X съезда РКП(б), М., 1963, ст. 17.

<sup>24</sup> «Կոմունիստ», Բաքու, 1921, № 15:

<sup>25</sup> Հեղտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, էջ 444:

<sup>26</sup> Հեղափոխական կոմիտեի «Հայաստանում», Եր., 1974, էջ 107:

քրիստոսի հեղկոմը: Քեմալականների կողմից ան իրացնում էր արդեն Ղարաքրիստոսում գտնվող թուրքական ներկայացուցչությունը Քեֆիկ Բեյի գլխավորությամբ: Այս գոտին փաստորեն չեզոք էր միայն Հայաստանի համար, որովհետև այդ տարածքը նույնպես ենթարկվում է նույն ճակատագրին՝ ինչ որ օկուպացված մյուս տարածքները: Հայ-թուրքական շեղոք գոտում թուրքերի կատարած գաղանձությունների մասին են պատմում Հայհեղկոմի նախագահ Ս. Կասաբեկի անունով ստացված՝ օգնություն հայցող բազմաթիվ դիմումները և զեկուցագրերը<sup>27</sup>: Այդ մասին հիշատակել է նաև Ղարաքրիստոսի հեղկոմի նախագահ Սեբո Մանուչյանը. «Այս նոր Չեզոք գոտին ևս մի շարիք է Հայաստանի աշխատավորության համար: Խրոնիկական երևույթ են դարձել ալան-թալանները: Տաճիկ ասկարները օրը ցերեկով անցնում են սահմանը և Հայաստանի սահմանակից գյուղերը ենթարկում կողոպտուտի: Քանի անգամ այդ առիթով բողոք է ուղղվել Ղարաքրիստոսի տաճիկական միսիային, սակայն ապարդյուն: Քանի անգամ հեղկոմի ջանքերով ձերբակալվել են մեղսակից ասկարները ու հանձնվել իրենց միսիային, սակայն մնացել են անպատիժ»<sup>28</sup>: Փաստորեն շեզոք գոտում կարգ ու կանոնը վերահսկելու նպատակով Ղարաքրիստոսում գտնվող թուրքական միսիան ոչ միայն ոչինչ չէր անում այդ ուղղությամբ, այլև դարձել էր պատուհաս Ղարաքրիստոսի հեղկոմի համար: Այդ տարածքում միջնադարյան մեթոդներով իրացվող հարկահանությունը քողարկելու նպատակով նրանք առիթը բաց չեն թողնում միջադեպեր ստեղծելու և շեղած բաների շուրջ աղմկելու: Քեֆիկ բեյը Ղարաքրիստոսում կատարում էր նույն գործը, ինչ որ Բահահողինը Սրևանում: 1920 թ. դեկտեմբերին Կարաբեքիրը, հիմնվելով նրա տված տեղեկությունների վրա բողոքել է կենտրոնին, որ իբր Ղարաքրիստոսի հեղկոմը ոչնչացրել է այդ շրջանի երեք թուրքական գյուղ<sup>29</sup>: Այս «փաստը ստուգելու համար Ղարաքրիստոս է գալիս հատուկ հանձնաժողով Աղբրեջանի հեղկոմի անդամ Բ. Շահաճիբեկու գլխավորությամբ: «Հանձնաժողովը տեղում պարզում է, որ ոչ թե քնաչինջ են եղել, այլ այդ գյուղերում կազմված են հեղկոմներ, որոնք աշխատում են տեղական օրգանների հետ համերաշխ<sup>30</sup>: Ղարաքրիստոսի ներքին գործերին միջամտելը, որը արտասահմանում էր չհիմնավորված պահանջներով, դարձել էր սովորական երևույթ թուրքական միսիայի համար: 1921 թ. հունվարի 14-ին Ղարաքրիստոսի հեղկոմի նախագահը Հայհեղկոմին չալոնում է, որ տեղի թուրքական միսիան ամեն օր մթերքներ է պահանջում, իսկ իրենց ոչինչ չունեն տալու<sup>31</sup>: Հունվարի 8-ին թուրքական հրամանատարությունը վերջնագրով պահանջում է իրենց հանձնել 4 ցիտեռոն մազութ: «Ղարաքրիստոսի հեղկոմը երկրի պարենային ու քաղաքական ծանր կացությունը նկատի առնելով՝ վճռեց ունեցած բոլոր մազութը հանձնել տաճիկներին, չնայած որ Խորհրդային Հայաստանը շատ մեծ կարիք ուներ հեղուկ վառելանյութի»<sup>32</sup>:

Սովետական Հայաստանի նկատմամբ թուրք ազգայնականների քաղաքականության տիրական ձևերն ու մեթոդները զայրույթ ու զարմանք են հարուցում նույնիսկ այսօր: 1921 թ. հունվարի 31-ին Կարաբեքիրը հեռագրում է Բաքվում Թուրքիայի ներկայացուցչի Մ. Շեֆքեթբեյին. «Տեղեկացել ենք, որ Ռուսաստանից Հայաստանի աշխատավոր ժողովրդին ուղարկված նրվերների մեջ կա նաև նավթ: Մենք նավթի, մազութի և բենզինի խիստ պահանջ ունենք: Առաջին պարտիայով մեզ ուղարկեց 10 վագոն բենզին, 10 վագոն նավթ և 20 վագոն մազութ»<sup>33</sup>: Սվ որպես երաշխիք իր լիտի պահանջի բավարարման, նույն օրը վերոհիշյալ հասցեով հղում է քաղաքական մեղադրանք պարունակող երկրորդ հեռագիրը: «Ղարաքրիստոսում գտնվող կարմիր զորամասերի կողմից զենքի խուզարկություն է կատարվել տեղի թուրքական գյուղերում: Այդ հանգամանքը թուրքական ազգաբնակչության վրա շատ վատ տպավորություն է թողել: Խընդրում են ձեռնարկեք բոլոր միջոցները, որպեսզի կարմիրների կողմից չկրկնվեն այդպիսի ստուգումներ»<sup>34</sup>:

Հայաստանի կառավարությունից պահանջելով բոլոր զենքերը, միևնույն ժամանակ նրանք ցանկանում էին զինված պահել Սովետական Հայաստանի թուրք ազգաբնակչությանը:

1921 թ. հունվարի 12-ին Ղարաքրիստոսի հեղկոմը տեղի թուրքական միսիայի անդամների խնդրությունը պարզելու համար փաստաթղթերի ստուգում է կատարում: Այս միանգամայն օրինական գործելակերպը թուրքական կողմի համար մեծ աղմուկի առիթ է հանդիսանում: 1921 թ. հունվարի 29-ին և 30-ին Կարաբեքիրը երկու նոտա է հղում Հայաստանի արտաքին գործերի

27 ՀՀՍՀ ՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 5, ք. 1—13;  
 28 «Կոմունիստ», Եր., 1921, № 45;  
 29 «Կոմունիստ», Եր., 1921, № 45;  
 30 Նույն տեղում:  
 31 ՀՀՍՀ ՊԿԱ, ֆ. 114, ց. 1, գ. 6, ք. 106;  
 32 «Կոմունիստ», Բաքու, 1921, № 8;  
 33 ՀՀՍՀ ՊԿԱ, ֆ. 114, ց. 1, գ. 6, ք. 103;  
 34 Նույն տեղում:

ժողովրդական կոմիսարին, որոնցում ջանում է միջադեպը ներկայացնել որպես թշնամանք հեղափոխական Քուրքիայի նկատմամբ<sup>35</sup>։

Օկուպանտի դիրքերից Հայաստանի կառավարության ամենաօրինական գործակալերը մեծ ազմուկի նյութ դարձած Քուրք զորապետին 1921 թ. փետրվարի 4-ին պատասխանում է արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի տեղակալ Ա. Մուսվյանը։ Հերքելով Կարաբեքիթի անհիմն փաստարկները, Ա. Մուսվյանը ցույց է տալիս, որ Ղարաբեքիտայի հեղկոմի գործակալերը բխում է միջազգային դիվանագիտության նորմերից։ Հիշեցնում է նաև, որ Սովետական Հայաստանի ոչ մի քաղաքացի չի անցել Ալեքսանդրապոլ առանց Հայաստանում Քուրքիայի ներկայացուցիչ Բահադդինի անցագրի<sup>36</sup>։ Անդրադանալով Կարաբեքիթի մեղադրանքներին, որ իբր «Հայաստանի կառավարությունը թերանում է հեղափոխական Քուրքիայի նկատմամբ իր պարտականությունների կատարման մեջ», Ա. Մուսվյանը գրում է. «...Սովետական Հայաստանը իր դաշնակիցների՝ Սովետական Ռուսաստանի և Սովետական Ադրբեջանի բարեկամական հարաբերությունները հեղափոխական Քուրքիայի հետ պարտադիր է համարում նաև իր համար (որի ապացույցն է նրա ամենօրյա գործունեությունը հայ-Քուրքական հարաբերություններում), բայց նա իրավացիորեն նույնը սպասում է Քուրքիայի կողմից։ Ձեր նոտայում մենք կարդացինք զեղեցիկ խոսքեր հայ ժողովրդի նկատմամբ Ձեր տածած բարեկամական զգացմունքների մասին, բայց մարդկանց, մասնավորապես կառավարողների մասին դատում են ոչ թե նրանց խոսքերով, այլ գործերով։ ...Եթե բանվորա-գյուղացիական Հայաստանի լսողությունը ամեն օր և ամեն ժամ շխլացնեն Ձեր զորքերի կողմից. օկուպացրած տարածքներում մահացող հայկական ժողովրդական մասանների հոգեվարքի ձայները, եթե տասնյակ և հարյուրավոր ավերված գյուղերի ծուխը և մոխիրը շհասնեին մեզ, եթե չլինեին այդ բոլոր սարսափները, բանվորա-գյուղացիական Հայաստանը անվիշտ հիմքեր կունենար անկեղծորեն ուրախանալու այդ զեղեցիկ հնչող բառերով<sup>37</sup>։ Այս նոտան Սովետական Հայաստանի կառավարության իրավացի զայրույթն արտահայտող փաստաթուղթ է։ Բայց զրչով արտահայտած զայրույթը համապատասխան ազդեցություն չէր կարող ունենալ քեմալականների վրա։

Քուրքիայի թշնամական քաղաքականության հետևանքով Հայաստանում ստեղծված ճգնաժամային իրավիճակի մասին 1921 թ. փետրվարի սկզբին ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Վ. Ձիչերինին զեկուցում է Բ. Լեզրանը։ Փետրվարի 6-ին Ձիչերինը հեռագրում է Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանին։ Հեռագրում մասնավորապես ասված է. «ՌՍՖՍՀ կառավարությունը խորը հուզմունքով իմացավ եղբայրական Խորհրդային Հայաստանի հանրապետության ծանր վիճակը հատկապես նրա բռնագրավված շրջաններում։ ...—Այդ առիթով մենք արդեն պահանջներ ենք դրել տաճկական կառավարությանը և ամենավճուճական եղանակով պետք է պնդենք, որ տաճկական իշխանությունը իր վերաբերմունքը փոխի Խորհրդային Հայաստանի կառավարության նկատմամբ»<sup>38</sup>։

**К. Х. САРДАРЯН.—Взаимоотношения Советской Армении и Турции в декабре 1920—феврале 1921 г.—**Хотя в исторической литературе принято считать, что после установления Советской власти в Армении отношение Турции к ней коренным образом изменилось, автор делает попытку показать, что до подписания в Москве русско-турецкого договора (1921, март) кемалисты стремились навязать Советской Армении заключенный с дашнаками Александропольский договор. Показано также отчаянное сопротивление ЦК КП Армении и Армревкома разрушительной политике Турции.

<sup>35</sup> Նույն տեղում, թ. 110։

<sup>36</sup> ՀՀՄՇ ՊԿԱ, ֆ. 114, ց. 1, գ. 6, թ. 111։

<sup>37</sup> Նույն տեղում։

<sup>38</sup> Документы внешней политики СССР, т. III, М., 1959, с. 507.